



ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ

և ի

ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ

ՆԻՒ Ս. ԹԻՒՂԵՆՃԱՆ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ

Պատկերա Բէրչմպէ Բագար Երսի Խանի գէմը Սամուր փողոց Թիւ 18

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԹԵՐԹԻՐ 20 ՓՐ. ԱՐԾԱԹ

ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ո՛ՎԵՐԻՄ՝

Կ. Պօլսոյ համար

Տարեկան	դր. 100
վեցամսեայ	» 50
Եռամսեայ	» 25

Գաւառաց համար

Տարեկան	դր. 150
վեցամսեայ	» 75
Եռամսեայ	» 40

Օտար երկիր տրկն. 40 Ֆր. ք.

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ասիական բարենորոգմանց խնդրոյն վրայօք վերջերս անգղիական խորհրդարանին մէջ անգղ. կառավարութեան թոյլ և դանդաղ վարմունքը և սորա տուած անորոշ և երկիմաստ բացատրութիւններն քննադատող երեսփոխանաց մին կըսէր թէ, «չառտ անգամ կ'պատահիր որ, աւելի շատ կ'սխալին այն մարդիկ որք ամենէն քիչ սխալելու էին»

Նոյնը մեք ևս աստանօր կրկնելու կ'առատաւորեմք զլսեմ. Օտեան էֆ.ի նկատմամբ, ընդհ. ժողովոյ վերջին նիստին մէջ իւր բրած ատենաբանութեանը ինչ ինչ կետերուն համար, որոյ մին է իզմիրլեանի համար շնորհակալութեան քուէի առաջարկութիւնը, զոր խորհրդարանն ալ ընդունելով տրուաւ:

Եթէ խորհրդարանի մը տրուած շնորհակալութեան քուէն շնչին նշանակութիւն մ'ունենցած ըլլար մեզ համար, խօսքն անգամ բերան առնելու չէինք ղիջաներ, իսկ այնպէս չէ, — խորհրդարան մը շնորհակալութեան քուէ կ'տայ Պ. Թիէրէ' որ գերկիրն թշնամուոյն գրաւմանէն վող ընդ փոյթ ազատեց, խորհրդարան մը շնորհակալութեան քուէ կ'տայ Ս. Պատրիարքին՝ որ Հայկական խնդիրը գէթ մինչև այսքան ինչ բան մը ձեռք կարենալ ձգելու համար աշխատեցաւ ոգի ի բոին, և խորհրդարան մը շնորհակալութեան քուէ կ'տայ իզմիրլեանի՝ որ բան մ'ալ չըբաւ, բան մ'ալ չգործեց, ընդհակառակն՝ նոյն իսկ ըստ իւր խօստովանութեան՝ քառամսեայ ստրկութեան վիճակ մը ստեղծեց և վարեց:

Ասի ծիծաղելի բան է, բայց մենք խորհրդարանին յանցանք չենք գտներ, զի մեր երեսփ. ժողովոյ մեծամասնութեան ինչ

զիր մը ըմբռնելու և իմաստաւորելու կարողութենէն զուրկ լինելն նոյն իսկ իր գործերովը՝ աշխարհի գիտցած բանն է, ամեն մարդ զիտէ թէ՛ բաւա, կան է որ մէկն ելնէ իրեն բան մ'առաջարկէ, նա առանց հետեւանք կարենալ կշտելու՝ անմիջապէս կ'ընդունի, Ուստի մեր երեսփ. ժողովոյ մէջ զնաստակար կամ անվարկի քուէարկութեանց բուն պատասխանատուութիւնը՝ աւելի զայդ առաջարկողներուն կ'վերաբերի ըստ որում իզմիրլեանի տրուած շնորհակալութեան հեղինակն ալ նոյն ինքն Օտեան էֆ. եղած է, հարկ կ'համարուիք հարցնել իրեն թէ՛ ո՞ր գործունէութեանը և ո՞ր արդիւնաւոր գործոցը համար այդ պիտի շնորհակալութեան մը արժանի դատեց զՏ. իզմիրլեան:

Օտեան էֆ. շնորհակալութեան քուէ կ'առաջարկէ այն պիտի անձի մը համար՝ որ կրնար աւելի աղէկ գործել եթէ իր շրջանակը ընդարձակ լինէր, այնպիսի անձի մը համար՝ որ չէ կրցած ըստ բաւականին աղէկ գործել Ռ. Դրան հետ յարաբերութիւն չունենալով, այնպիտի անձի մը համար՝ որ ըստ իւր վկայութեան՝ չէ կրցած իր ուղածին պէս գործել, այլ ըստ արկութեան և գերութեան վիճակ մ'անցուցեր է:

Ապա ուրեմն ի՞նչ քուէ պիտի առաջարկէր Օտեան էֆ. այնպիտի անձի մը համար՝ որ իրօք շատ աղէկ գործ տեսած լինէր, ընդարձակ շրջանակ մը ունեցած ըլլալով, Դրան հետ յարաբերութիւն, և ազատ ու փութալան ասպարէզ մը ունեցած ըլլար, Օտեան էֆ.ի շնորհակալութեան քուէի առաջարկութիւնը մեր հին հայկական սա առածը կ'ձգէ մտքերնիս թէ, «հաստն ու բարակը մէկ զին, վայ դայ բարակ մանողին»

այս ազգին մէջ գործ տեսնողն ալ շնորհակալութեան արժանի կըլլայ եղեր գործ չտեսնողն ալ թողով Օտեան էֆ.ի որ ինքք իզմիրլեանի գործունէութիւնը և քառամսեայ պաշտօնավարութեան մէջ ցուցած փոյթն և եռանդը հաստատող իրողութիւնները մասած է զըտնել, մեք հարկ կ'համարուիք այս առթիւ յառաջ բերել այն իրողութիւններն, որք զՏ. իզմիրլեան շնորհակալեաց արժանի չընեցնէ ետքը՝ ընդհակառակն մեզուրանաց ալ արժանի կ'ընծայեն:

Այս յարաբերութիւնը կապացուցանէ թէ՛ կամ իզմիրլեան իր գտնուած զիրքն ու կացութիւնը չճանաչեր, կամ ինքք պատր. փոխանորդութեան գահուն վրայ յարտաւելու փառասիրութիւն մը կ'թեկնածէ:

Կարծել թէ Պատրիարքին հրատարակեալ կենալովը՝ իր ցուցած պատճառներն պիտի բարձուին իրաց ընթացքին վրայ կատարել տգիտութիւն մ'ունենալ բոել է:

Ինքք, իւր պատր. փոխանորդութիւնը Դրենէն չփութերա, նախքը ակնյայտ տեսնելէն յետոյ, եթէ չէր զգար թէ Դրան և ազգին յարաբերութիւններն այսպէս խղեալ մնալէն՝ ազգը անիշխանութեան պիտի առջնորդուի, դարձեալ աննկրելի տգիտութիւն մնէ զոր ցոյց կը տայ ազգին կացութեանը և իր գտնուած զիրքին նկատմամբ:

Ուստի և իր դիրքին և կացութեանը մասին այս աստիճան անհեռատես և տղէտ պաշտօնեայ մ'ալ չէր կրնար շնորհակալութեան քուէի արժանանալ:

Իսկ եթէ կզգար թէ ազգին և Դրան յարաբերութիւններն այսպէս խղեալ մնալէն ուրիշ բան յառաջ չէր կրնար գալ ըսոյց եթէ ընդհանուր միաս և և ազգային անիշխանութիւն, զայս գիտնալովն հանդերձ՝ առկա իր ստուերական փոխանորդութեան պաշտօնը շարունակելուն վրայ պնդելը՝ պարտեքին զիտուած մ'ունեցած էր Ս. Պատրիարքը միշտ հեռի և հրատարակ պահել յաթոռէն, և պատրիարքական գահը կարելի եղածին չափ երկարատեան ինքք զրուելու փառասիրութիւն և թեկնածութիւն մը տածել:

Եւ ազգին սիրելի պատրիարք մը իր աթոռէն ընդ երկար հեռի պահել ուղղ, և այդ աթոռի միաս ազգին ինքն ընդ երկար զրուելու նկատող պաշտօնեայ մը՝ շնորհակալութեան քուէի չէր կրնար արժանանալ:

Օական իզմիրլեան ասանցմէ անհամեմատ աւելի ծանր պատկասութիւն և թերութիւն մը ունեցած էր, որ բնաւ ներքին չկրնար ըլլալ:

Իզմիրլեան՝ պատր. փոխանորդութեան պաշտօնին կոչուած լինելով, տարակոյս չկայ թէ Պատրիարքին անկ եղած պաշտօնն ու պարտականութիւնը պիտի կատարէր, գոնէ ազգային ներքին գործոց մասին:

Պատրիարքին կամ ժողովոց նախագահող Ս. պաշտօնէին պարտքն է նայիլ որ օրէնքը ըբունարարուի, օրէնքէն դուրս կամ հակառակ որոշումներ չըտրուի, օրէնքը ստանալու չըլլայ, և իր այս պարտականութիւնն ալ կատարելու համար՝ օրէնքը բացառիկ իրաւունք մը կ'տայ իրեն՝ ամեն ժողովոյ, մինչ

Գ. ՏՈՐԻ ԹԻՒ 1048 2.21 2.19 2.21 2.19 7.20 7.20 5.00 5.00 6.00 59.00 66.50 82.00 81.25 4.05 3.40 3.25 4.02 3.75 44.25 ԴՅ (L) 09.18 87.15 89.37 51.10 18.00 16.30 06.25 05.00

չև անգամ խորհրդարանին մէջ իսկ իւր անձնական համազումն ու կարծիքը առաւելակշիռ բռնել և եղած որոշում մը գործադրելէ առաջ, մինչև 3 անգամ ետ դարձնել իր աւարկութեամբը կամ պատճառաբանութեամբը իզմիրլեան իւր այս պարտականութեանը դէմ ալ մեղանշեց և անհաւատարիմ գըտնուեցաւ իրեն աւանդ թողուած պատր. փոխանորդութեան պաշտօնին:

Իզմիրլեան, որ սոսկ երեսու փոխան եղած ատեն՝ չէր փախցընէր ոնէ ազգային խնդիր մը ուր իր անձնական կարծիքը յայտնելու իրաւունքը լիովին վայելել չուզէր, մինչև իսկ երբեմն Ս. Պատրիարքն անգամ սրանելով ժողովէն առնել քալել տալու չափ, (ինչպէս շատ լաւ կ'իշխէր), այս անգամ եւր պատր. փոխանորդութեան պաշտօնին կ'կոչուի, յորում առաւել քան երբէք իր անձնական կարծիքներն պաշտպանելու իրաւունք մ'ունէր ի ձեռին, ի պահպանութիւն օրինաց, ընդհակառակն իր բոլոր կարծիքներէն կ'հրաժարի, և պարզ մեքենայ մը կ'դառնայ անոնց ձեռքը՝ որք իրեն այդ պաշտօնին բարձրանալուն առաջին օգնողներն եղէր էին, և սաւառիկէն տատէ ինքն ալ իւր այն յայտարարութեամբը թէ իր քառամսեայ պաշտօնավարութիւնը՝ ստրկութեան և դերութեան վիճակ մ'եղած էր, քատուղիւ զինքը այդ պաշտօնին կոչող խարդաւտնիչներն իրենց կամայք իրքէ ստրուկ և գերի գործածելով զՏ. Իզմիրլեան, բայց այն բանը որ աննորելի է իրեն՝ կամաւ և զիտութեամբ այդ ստրկական վիճակին հանդուրժելն է, և կամաւ ուրիշին կամայք գերի և ստրուկ եղող պաշտօնեայ մը՝ շնորհակալութեան քուէի չէր կրնար արժատանալ, ուրիշ խնդիր է թէ Օտեան էֆ. գերի և ստրուկ ըլլալու նուաստացող պաշտօնեայներ կրնառէ կամ կուզէ շնորհակալութեան քուէ տալու նմալ:

Ընդ թէ Իզմիրլեան, իրքէ ազգ. ժողովոյ նախագահ, պարտաւոր էր իր կարծիքը յայտնել՝ օրինաց բանաբարութիւնը գոնէ արդիւնէն համար, ընդհակառակն Իզմիրլեան քանի որ այդ պաշտօնին զլուխն անցեր էր, կատարուած մի քանի օրինական զեղծմանց տուալք կատարեալ և բացարձակ լռութիւն պահած էր, և թող տըւած էր որ օրէնքը բանաբարութիւն մինչդեռ երեսուփոխաններէն ոմանք այդ որոշմանց դէմ յանուն օրինաց բողոքելու քալութիւնն ունեցեր էին, Իզմիր-

լեան իրքէ նախագահ՝ զաքարէական պապանձման դատապարտուած՝ անտորբեր և անդգայ կ'նստէր, և այս օրինական զեղծմանց և ապօրինաւորութեանց տեսարանն ընծայող նիստերէն մէկուն՝ նոյն ինքն Օտեան էֆ. ալ ներկայ էր, զարմանալով՝ բան որ այսքան շուտ մտցեր է:

Հետեւաբար Իզմիրլեան, իւր պարտականութիւնը ճշդիւ չը կատարելովը և օրէնքը քանիցս ստնակիս ըլլալու թող տալովը՝ անհաւատարիմ գտնուեցաւ իր պաշտօնին և նոյն իսկ Ս. Պատրիարքին դէմ, որոյ Աջը համբուրելովը անանկ զիւրութեամբ շնորհիւ իրեն: Ուստի և իր պաշտօնին ու պարտականութեանը պակասուող, գանցառու և անհաւատարիմ գըտնուող պաշտօնէի մը՝ ամօթ է շնորհակալութեան քուէ առաջարկել, երբ մեզադրանաց քուէի արժանի էր դա:

Ուրիշ պարագայ մ'ալ կայ, զոր չեմք ուզեր այս առթիւ անիշխատակ թողուլ:

Երեսու փոխանորդ 1878 տարուան շրջանանստին բացման օրը, որ տեղի ունեցաւ Գումգարու Մայր եկեղեցոյ մէջ, Ս. Պատրիարքը երբ իւր անձեռնակին տկառութիւնն առաջ բերելով իւր տեղը պատր. փոխանորդի մը ընտրութիւնը և կամ իւր խորհրդականին ընդհ. ժողովոյ կողմէն պաշտօնապէս ճանչցուիլը կ'առաջարկէր, ուժգին ընդդիմացողներուն մէկն ալ նոյն ինքն Իզմիրլեանն էր այն ատեն, իրքէ ազգին վնասակար որոշում մը, երբ այս անգամ միեւնոյն իր ազգափնաս կոչած առաջարկութիւնը ոչ միայն կ'քուէարկէ, այլ և այդ ազգափնաս փոխանորդութեան պաշտօնն ալ իր անձին վրայ ընդունելու կ'զիջանի:

— Ինչո՞ւ այս հակասութիւննք, — վասն զի 1878ին ընդհ. ժողովէն ճանչցուելիք պատր. փոխանորդը Մխիթարեան խորէն սրբազանն ըլլալովը և իզմիրլեան չըլլալովը, բնականաբար սա ե իր կուսակիցը դէմ պիտի կենային, իսկ այս անգամ Իզմիրլեանի փոխանորդութեան ընտրելիութիւնը իր կուսակցաց ձեռքը տալու հովուած ըլլալուն համար էր որ՝ անցեալ տարի մերժած որոշումն այս տարի ընդունեց և յանցելուն խոտած պաշտօնն այս տարի իր վրայ առաւ:

Բոլոր այս արարքները կապացուցանեն թէ՛ Իզմիրլեան անձնական շահու և փառասիրութեան համար՝ իր կարծեացը դէմ ալ կ'հակասէ, և անձնական շահ նկատող, փառա-

սիրութեան թեկնածոյ և ինքն իրեն հակասող կեղծաւոր ու սուտակասող ասղ. պաշտօնեայ մը բնաւ երբէք չկրնար շնորհակալութեան քուէի արժանանալ, այն քուէին՝ որ տըւողինը չէ, այլ ազգինն է:

Օտեան էֆ. ի այդ առաջարկութիւնն ըրած պահուն, թէ մեք ընդհ. ժողովոյ մէջ բազմամ լինէինք, այդ շնորհակալութեան քուէն պարսաւանաց քուէի փոխել պիտի առաջարկէինք:

Իւր Իզմիրլեան մեր զայս քուէիքը շատ լաւ դիտնալուն համար էր որ երբ Սահմանադրութեան օրինաց հակառակ խարբերողի օրինաւոր երեսուփոխանը երեսու փոխան մէջ առնուլ կ'մերժէին իր կուսակիցն, ընդ ինքն ալ պահած լռութեամբը թող տուաւ որ նոր անդանօր մուտն արդիւնի, թող տուաւ որ օրէնքը ստնակիս լինի և բանաբարութիւն միայն թէ հակակարծիք երեսուփոխան մը հոն մանելէ արդիւնի:

Մեր մուտն արդարեւ պահ մը արդիւնեցաւ, բայց ինքն ալ ժողովողային հանրագրով տապալեցաւ, առ որ ուղղեալ Օտեան էֆ. ի խօսքերն ալ սեւակ մ'անտրգանք և նախատինք էին այն ժողովողական հանրագրոյն, որ ըզմարտար պաշտօնավարութիւնը ազգին վնասակար դատելով, Ս. Պատրիարքին ազգ. գործոց գլուխը վերագործը կ'ընդգրկէր, և Օտեան էֆ. այդ խնդրոյն իրաւացի ըլլալը ճանչիլէն և Ս. Պատրիարքը իր պաշտօնին հրաւիրելէն ետքը, Նո՞ւն մ'ըրած ըլլալու համար թերեւս — չքսելու համար կեղծաւորութիւն — հանրագրին և իր լուեկայն դատապարտած անձին՝ առ երեսու շը շնորհակալութեան քուէ կ'առաջարկէ, այն մ'որ մեղադրանաց քուէի արժանի էր:

Հասարակաց կարծիքը զՕտեան էֆ. մինչև ցարդ անկեղծ անձ մը ճանչցած և բարեանած ըլլալով, իրաւունք ունի պահանջելու իրմէն որ գոնէ իր հըրապարակային յայտարարութեանց մէջ իւր անկեղծութիւնը կասկածի տակ չ'ձգէ:

Իսկ փառապանի և Քրիստոստորի նկատմամբ ըրած յայտարարութեանը վրայ ալ մօտակայ թերթով պիտի խօսիմք:

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

ԱՆԴ. ԻՌԻԶՐԻԱԲԱՆԻՆ ՄԷՁ (Շար. սես թիւ 1047)

Ազնիւ լորտին Հայոց նկատմամբ ունեցած նուազ մարդասիրական արամադրութիւնն արդէն երեցաւ երբ ֆօնկրէի 129

նիստին մէջ Սան-Սթէֆանօյի գաշնագրին 167 յօդուածին քննութեամբն զորոցիլ առաջարկեց ինչպէս յայտնի է՝ այս յօդուածին համեմատ՝ Բ. Դուռը կ'խոստանար առանց յապաղման գործադրել հայաբնակ գաւառաց մէջ բարենորոգմանք, որպէսզի Ռուսաց զօրքն այն գաւառներէն քաշուելէն ետե՛կուի ու խառովութիւն չձագինս Ասիայ ընապէս կ'հետեւէր թէ՛ Ռուսաստան չպիտի պարպէր այդ երկիրներն մինչև բարեճօրոգումննրու գործադրութիւնը: Բայց որովհետեւ Անկիոյ քաղաքական շահուց ներհակ էր Ռուսաց բանակին՝ վերանորոգումներու յապաղումն առիթ բռնելով, Հայաստանի մէջ մնալը 167 յօդուածէն շնչիլ տըւաւ յետագայ տողերը. «Սրովհետեւ Ռուս զօրքն Հայաստանի մէջ բռնած երկիրներէն, սր Ռուսքիոյ պիտի յանձնուին, քաշուելով՝ թերեւ կուսներ ու կ'ընկուներ ծագին երկու տէրութեանց լաւ յարաբերութեանց վնասութեան և անցուց 617 յօդուածն, որով Հայաստանի բարենորոգումներու գործադրութեան հսկելու իրաւունք տրուեցաւ Երուսալի տէրութեանց, Սակայն լորտ Սակիզպէրն այս յօդուածն ընդունել տալու ատես, արդէն զգրպանին մէջ պատրաստ ունէր յնս, կի Անկիո-թրքական պայմանագրին, որով 617 յօդուածին պատճական վաւերումն միայն իրեն սեպհականաճ եղաւ կերպով մը, և այսպէս միւս տէրութեանց հաւաքական երաշխաւորութիւնն թէ՛ ոչ ջնջեց՝ գէթ թեթեւացուց:

Այսպէս կ'հաստատուի Անկիոյ և Ռուսքիոյ կառավարութեանց մէջ թագուն ակնատութեան զգացում մը, որ կստիպէ իրարու ներողամիտ աչօք նայիլ, այսպէս կ'բացատրուի ազնիւ լորտին գիրքն որ՝ կրէնվիլի բնածին պէս՝ յետին ծայր դըժուարին է. այսպէս կ'խօսի անուանի լորտ մը որ երբ Պերլինէն յաղթանակաւ Լնտօն դարձաւ, հրատարակեց թէ «Բաղադարութիւն կ'ըրէ պատուով, այսպէս կ'խօսի մարդասէր լորտ մը որ Հայոց ազնից վրայ սեքօղ մը կ'ձգէ՝ դարերու անբուժելի գործը կ'համարի, թէ և կ'պարտի զբաւման մէկ պայմանը Հայաստանի բարենորոգումն էր. . . . Կ'մոռնայ Անկիո-թրքական պայմանագրին, որ Հայաստանի ու փոքր Ասիոյ այնքան բարիք կ'խոստանար, և պատասխանատուութեան բնօրը Պերլինի գաշնագրին ստորագրող միւս տէրութեանց վըրայ կ'թողու, որ թերեւ իրպէս

շամբ անտարբեր կ'մնան, քանի որ իրենք կիպրոս մը յատացան, նմանայ ի պաշտպանութիւն պաշտօնէսը լծեան լորտ Սանտընի հռետորական ծագիկն Ասիական թուրքիոյ վերածնութեան մասին շոգեշարժ արօրովն : Այսպէս ուրեմն կըսէ անկէրական թերթ մը . «Այս է, ըստ լորտ Սանտընի, Անկլո-թրքական պայմանագրին սկիզբն ու վերջը, եթէ չլինի. Սուլթանին հպատակներուն առջև պատասխանատուութիւն մը չունի, միայն ի վերջում թագուհւոյն հը պատակներուն առջևն ալ չունի» :

Շարունակելի

Մտաբան մէջ Ուրնեցի բանատարկերց ներումն չնորհուելու և արձակուելու մասին Ա. նախարարին կողմէն Ս. Պատրիարք Հօր խոստում և վստահութիւն տրուած ըլլալու վերջը զոր մեք ծանուցած էինք քանի մ'որ առաջ, տեղւոյս ազգութիւններէն սմանք երէկ կ'հաստատեն զայդ :

Ազգային միջանկ թերթեր կ'ծանուցանէին թէ, Տիգրանական կերտի առաջնորդ փիլիպպոս եպիսկոպոս, իւր հրատարակութեան համար ազգ. վարչութեան գէմ առ ընդհ. ժողովն մատուցած բողոքովը յետս կոչելով, դորձ Ս. Պատրիարք Հօր իրաւարարութեանը յանձներ է :

Մեք այսպիսի բան մը չ'ըսեցինք, ընդհակառակն կիմանա՞ք թէ այս կեր, որ Պատրիարքարանը Ս. Պատրիարք Հօր և փիլիպպոս եպիսկոպոսին մէջ տեղը, Ս. Պատրիարքին ըրած մէկ փոքր յանդիմանական ակնարկութեանը վրայ, այն աստիճան ծանր գծաթիւն մը ծագեր է, որ Ս. Պատրիարքն ստիպուել է զփիլիպպոս եպիսկոպոսն իւր աչքէն և Պատրիարքարանէն հեռացնել :

Գործոյն մանրամասնութեանը մէջ մտնելու հարկ չ'եմք տեսներ առ այժմ :

Կարևոր կ'ծանուցանեն թէ տեղւոյն անգղ. հիւպատոս Պ. Թորթըր, իւր կառավարութեանէն ստացած հրահանգին վրայ, կարնոյ գաւառին Հայոց ազգահամարն ուզած ըլլալով, ազգ. քննիչ Արժ. Յ. Վահան վարդապետ՝ ուղուած ազգահամարը շիներ և հիւպատոսին յանձներ է, հաստատելով թէ վերջին 4 տարուան մէջ հետը հետէ հրատարակելու տաճկական Սալնամէներուն մէջ տաճկաց թիւը բուն եղածին վեցպատիկ աւելի նշանակուած, ընդհակառակն Հայոց թիւն ալ հետզհետէ նուազեցնելով քիչ ցոյց արուած է :

Ս. Պատրիարքը Տիգրանական կերտի, կարնոյ, վանայ և Մշոյ կայս. ֆոմիսէրներուն յատուկ գիրքեր զրկեր է, յիշեալ դաւառաց մէջ շարունակ գործը. և առ հարստահարութեանց վերայ նոցա ուշադրութիւնը հրաւիրելու համար :

ՀՐԱՆԻՐ

Հայկազեան Միութեան ընդհանուր ժողովը նիստ ունի օգոստոս 19ի կիրակի օրն ի Ս. Առաքելոց վարժարան Եէնիգարոյի :

Կ'ինդրուի Մեծ. ընկերներէն որ հաճին նոյն օրը ժամը 3ին ներկայ գտնուիլ : 13 օգոստ. 79 Ատենապետ Կէնի-գարու Յ. Ի. Թոռլաքեան

ՀՆՈՍՊՐԱՆՈՒՐՔ

Լսնորա 29 օգոստ.

Սթէնտարտ թերթը կ'ըսէ թէ Ռուսիոյ գահաժառանգ իշխանին Սթոքոլմ ըրած ուղևորութեան նպատակն է Շուէտի չէզոքութիւնն ստանալ, որպէս զի Տանիմարքայի տրուի իր գործերու ազատութիւնը (*). — Տանիմարքայի գործերու ազատութիւն տալ բռնը՝ ըստ մեզ կը նշանակէ՝ Մանչի ծովէն Պուլթիկ ծովը երթալ ուղղ անգղ. նաւատորմին դէմ Սուևտայի նեղուցը գոցել ի հարկին, ասի ալ Անգլիոյ և Ռուսիոյ միջև ապագայ դժուարութեան պատահականութիւն կամ երկիւղ մը կ'ենթադրէ ինչի, Ե. Ի.)

Թայմզ կ'ըսէ թէ Պիզմարք իշխանին և Անտրաշի կոմսին տեսակցութիւնը Աւստրիոյ, Գերմանիոյ և Անգլիոյ միջև համաձայնութիւն մը կ'եցած ըլլալը կապացուցանէ :

Աֆղանիստանի և Զուլուստանի պատերազմաց վերջնական հակառակ, Անգլիոյ փամփոջարի գործարաններն ամենայն շտապաւ բանելու և շարժք 2 միլիոն փամփոջար շինելու վրայ ըլլալին ծանուցանող հասարակ լրագրաց տուած անդեկութիւններն զինուորական թերթերէն ալ կ'հաստատուի : Երևաւ սոյն ուղղամթերքն ալ Մալթա պիտի զրկուին, ուր ատենէ մ'ի վեր է շարունակ այս տեսակ ազգամիտ կ'մթթերուի :

Թագուհւոյն մէկ հրովարտակը, որն որ գաղափարական ըստ պայմերէն պահեստի մարմին մը կազմել կ'հրամայէ, լրագրաց կողմէն լաւ կերպիւ կ'ընահատուի Սոյն հրովարտակին համեմատ, թէ Անգլիոյ և թէ Հնդկաստանի մէջ զինուորական ծառայութեան քաջող առ հասարակ բոլոր մեծ և փոքր սպայ-

ներս անուներն մասնաւոր տուժարի մը մէջ արձանագրուի. լով պիտի պահուին, ի հարկին ալ սպայները բերդերու և ամբողջական պաշտպանութեանը կոչուելու համար միշտ ի պատրաստի գտնուելով :

Հնդկաստանի կառավարութիւնը ինդրած ըլլալով որ հին տեղի անգղ. զօրաց կենալու համար սրոշեալ 5 տարի պայմանաժամը 12 տարուան վերածուի, Անգլիոյ կառավարութեան կողմէն ալ հաւանութեան պատասխան տրուեր է :

Հնդկաստան զտնուող 60 հազար անգղ. զօրաց՝ ամեն տարի 25 000ը տեղափոխուելով, այս մասին ալ մասնաւոր ծախքեր սահմանուեր է :

Պրիւսէլ 29 օգոստ.

Էնտէրանտան Պէլթ թերթը կ'ծանուցանէ թէ Ռուսիոյ կայսրը սեպտմբ 2ին վիէննա պիտի հասնի :

Այս առաջ հասած

Ս. Բէթերսպուրկ 29. — Ժուրնալ տը Ս. Բէթերսպուրկ կ'ըսէ թէ կեդրոնական Ասիոյ մէջ եղած ռուսական արշաւանքին նպատակը Մէրվի նահանգն առնալ չէ, այլ թէ Ռուսիա այս խնդրոյն մէջ իր գործերու ազատութիւնը պահել կուզէ :

Աֆղանիստանի վրայ ալ խոսելով չ'կ'իշխեն թէ՛ Անգլիա խօսք տուած էր որ Աֆղանիստանի անկախութիւնը պիտի յարգէր, բայց հիմա Աֆղանիստան իրօք իր անկախութիւնը կորուսած ըլլալով, հետեւաբար իր կացութիւնը փոխուած է հիմայ :

Պաշտօնական տղարարութիւն մը բացէ իրայ կ'մեղադրէ ռուսական լրագրաց մէջ օտար տէրութեանց և ասոնց Պետական մարդոցը դէմ եղած յարձակումները :

Մատրիտ 29. — Թանճերէն առնուած նամակ մը կ'ծանուցանէ թէ Մարօքի կայսեր եղբայրը թունաւորուեր է, Միւնոյն նամակը կ'յաւելու նաեւ ըսել թէ՛ Անգլիացիք Թանճերի մէջ զօրանցներ կ'շինեն՝ Հնդկաստանէն գալիք զօրաց համար :

ԴՐԱՄԱԿԱՆ

Table with 2 columns: Item, Amount. U.S. ԹԱՐԱՐՈՒՄ ԲԱՊՈՒՆԵՑԱՆ 12.23, Բու մէլի 45 00, Թղթաղրամ 742.20, Պղինձ 500.00

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վեհ. Սուլթանը երէկ Միջօրէի աղօթքը Մէծիտիէի մէջ կ'իթք կատարելէն յետոյ, հանդիսութեամբ արտաքին գործերը խորհրդով միջև երեկոյ հին կեցու և ընթերքն ալ հին բրաւ : — Մասնաւոր հեռագիր մը

կ'ծանուցանէ թէ Ռուսիոյ կայսրը վարչաւիտ հասեր է, ուրկէ օգոստ. 22ին յուսիկայ 12. օր Գրբմ պիտի մեկնի, և օգոստ. 30ին ալ իւր անուան ստեղծարուութիւնն բլլալուն պատճառը, տեղւոյս ռուսական դեսպան Լօպանօֆ իշխանն ալ կ'կարծուի թէ շնորհաւորութեան համար Գրբմ պիտի երթայ :

— Նորէն զոյց կայ թէ Խըտիվ Թէվիթք փաշա Բամազանէն ետքը կ'Պոլիս պիտի գայ :

— Ռուսիոյ և Միացեալ-Նոսահանգաց կառավարութեան մէջ սովորականէն աւելի սերտ մտերմութիւն մը կ'նշմարտի հետք հետէ : Պոլսոյ Ամերիկեան դեսպանը Սե ծով ըրած շրջագայութեանը առթիւ Օտէսա հանդիպելով, տեղական իշխանութիւնք մեծ պատուով զինքն ընդունելու և կոչուելու տուեր են, Գեսպանը այս զշ. օր մայրաքաղաքս դարձաւ, Բաթէնթի օրինաց ծրագրին քննութեանը ներկայ գտնուելու :

Սոյն քննութեանը մէջ զեսպաններն այնքան բարեփոխման կարողութիւնը գտեր են՝ որք յիշեալ օրինաց՝ դեսպաններէն շինուանուելով մերձուելուն կրնան պատճառ ըլլալ, կըսէ տեղական թերթ մը :

— Ոսկերչի հայազգի միջնորդ մը եշ. երեկոյ ժամը 1ին միջոցները Սամաթիա իր տանը դրան առջևը զինուորական համազգեստ կրող 2 շարագործներէ յարձակումն կ'կրէ, որք կորցը սեղմելով զինքը գետին տապալելէն յետոյ, ժամադրացնու վրան գտնուած ստակը կը կողպտեն, և պատուհաններէն պոստոյց դրացիներուն դէմ ալ դաշոյններ նետելով լռեցընելէն ետքք, անպատիժ կ'առնեն կ'քալեն : Որ ուրեմն տարիկանս թիւնը կ'համի, որ սեհ հետք մը չ'կրնար գտնել : — Այս առթիւ մտքերնիս կ'ընայ թէ Պեռլիի զիշերապահները :

— Գշ. օր ալ Գատըգի զիս կաթոլիկաց եկեղեցին դող մթանելով սեղանին առաջքը բանուածոյ գորգը յափշտակեր են :

— Սօֆիայի պալատական ստիկանութեան վերաանուար Պ. Խրիսթօ Իվանօֆ օգոստ. 11ին Բէթլեամ երթալով, հրդեհի ջրհաններ անձամբ գնելու համար, 17ին իջանա՞ծ պահողակին մէջ տեղւոյն հանգարական ստիկանութեանը կողմէն կ'ծերբակալուի, անոր համար որ մտրա 31ին վիտիի մէջ խուժանը աւսար, հիւպատոսին վերայ յարձակելով, իվանօֆ փոխանակ ըստ իւր պարտաւորութեան՝ ամբողջ հանդարտեցընելով ցրուելու, ընդհակառակն ամբողջ գրգռեր և առաջին ապտակք ինքը իջուցեր էր հիւպատոսին : Պալկար ստիկանութեան վերաանուար այժմ Բէթլեամի մէջ արգելման տակ կ'գտնուի եղեր :

— Մեհաբիբանէի բանակն փախչող կարմաւորաց հարցաքննութիւնէն հասկցուեր է թէ, ստանց քով գտնուած ըրիզլթըրն ու գաշոյնները՝ պարսկական երկայնածե հացերու մէջ զրուելով իրենց բերուեր է :

... Խմբագիր
Յանալիկայ կիրակի 19 օ.
դոստ գրչիս Ս. Եկեղեցւոյ
համանուն Ս. Աստուածածնայ
վերափոխման ասնն ըլլալով,

Նորին Բարձր Սրբազնու.
թեան հոգեշահ քարոզին ջերմ
փափաքով լցուած համայն աղ.
գայնոց հրաւեր կկարդամք որ
փութան ներկայ գտնուիլ արա.
րողութեան ի Ս. Եկեղեցի եւ
քնդունիլ Ն. Սրբազնութեան
սրտաբուղիս օրհնութիւնները

Ի շրմաց թաղ. խորհրդոյ
Փ. Ատնդար. փոն. Ատնպտ.ի
Ս. Գ. Սէնճուլ. Սեպուհ Էսփէնան

14 Օգոստ. 79
Օրթագիր շ

ՅՈՒՑԱԿ ՆՈՒՐԱՏՈՒԱՑ

Ի նպաստ Սանդիտեան աղջկանց
վարժարանի Բ. - Հիսարու
(Շար. տես թիւ 1035)

(Օսմ. սկիւն 100 շրջէն)

Նախորդ հրատարակութեան

Table with 3 columns: Item, Price, Total. Includes items like գումարը, Ատեմար Սափալան, Եղբարք Թօգաթիւն, Թովսէփ Գալստիան, Ոմն, Ա. Պէշրեան, Կարապետ Էզնաեան, Ագաթան Թ. հտպուրունեան, Գ. Էլիկիւզէլեան, Տ. Գ., Բարեբաշտ ոմն, Թովսէփ Կ. Էրկանեան, Նազարէթ Շահպաղ, Ոմն, Մէրեէմգուլի, Տ. Տիւրբի, Ա. Յ. Ե., Գէորգ Մուրատեան

5792

Շարունակելի

ԱՁԳԻ

ՀԱՄԱԶԳԵԱՑ ՎԱՐՃԱՐԱՆ

ՕՐԻՈՐԴԱՑ

Ի Բերա լալէ փողոց թիւ 11

Տեսչութիւնն կ'փութայ յա.
տարարել թէ վարժարանը պի.
տի բացուի սեպտեմբեր Սեպտեմ.
ամսոյ 3ին, երկուշաբթի առա.
ւօտ:

Ով որ կուզէ տեսուիներուն
հետ խօսակցիլ կրնայ գտնալ ի
վարժարանին, ամեն առաւօտ
սկսեալ օգոստ. ամսոյ 23էն,
ժամ 2էն ց՛ն:

Ր. Սվաճեան ստորագրու.

թեամբ օգոստ. 19 կիրակի օր

Պէշիքթաշ Էօմէր-պէ.ին մեծ

սրճարանը քաշուելիք և 20

պարգև ստացող Օժանդակ վի.
ճակահանութեան չլծարուած

տոմսակներուն վաստկելիք պար.
զ կը պահանջուի իրաւունք չը

պիտի ունենան, Արդէն չլծա.
րուած թիւերը՝ վիճակահանու.

թիւերը քաշուած՝ տախտակի մը

վրայ նշանակուած պիտի ըլլան:

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Պէրպէրեան վարժարանի Տը.
նօրէնութիւնն կ'ձանուցանէ որ

վարժարանն փոխադրուած է

Սէլամըզ Գիրքճիպաշի ըն.
դարձակ տունը: Գպրոցը պիտի

բացուի օգոստ. 20 երկուշաբթի,

իսկ դասերն պիտի սկսին օգոս.
27ին, Նոր աշակերտ առլ փա.
փաքող ծնողք սոյն միջոցին մէջ

կ'հրաւիրուին տեսակցիլ Տնօրէ.
նութեան հետ վարժարանին մէջ:

ՀՐԱՒԷՐ

ԱՌ ՊԱՐԶԱՍԷՐ ՀԱՅՈՒՆԻՍ

Պարզասէր Հայուհեաց ըն.
կերութեան բնդ. ժողովը նիստ

ունի յանալիկայ կիրակի՝ որ

է օգոստ. 19, ի ժամ 7, ի Ն. Վ.
վարժարան:

Արդ՝ հրաւիրեալ են բոլոր

անդամուհիք և բնկերութեանս

մասնակցիլ փափաքող բոլոր

աղգասէր Հայուհիք, որով փըր.
կաւէտ միջոց մը ընտրած պիտի

լինին զիրենք կործանող շուռլ

սովորութիւնն իսպառ բաւնա.
լով:

Ի շրմաց ընկերութեան
Ստեանդպիր Ատենպատ.
Էդրուհէնճաշեան Էսփէ Պ. Յ. Թորթո.

17 օգոստ. 79 Սամթիւ

ԱՌՍԶՆՈՐԴ

ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՆՍԱԿԵՐԵՆ ԱԵՁՈՒԻ

Աշխատասիրեաց

Մ. Պարսաբեան Հիւանոց

1879

Աղջիկերէն լեզուն զիրար ըն.
տելանալու և քիչ ատենի մէջ փութիլ

սորվելու համար յարմարագոյն և մէկ

հատիկ գործի մը կրնար համարուել

սոյ նոր զլրբը, որ 240 երեսէ բաղ.
կացեալ է և կ'սորունակէ հետեւ.
եալները:

Մասն Ա. Քերականական կա.
նոններ-Մասն Բ. Ձրուցատրութիւն:

—Մասն Գ. Անգղերէնի յատուկ ո.
ճեր-Մասն Դ. Համառոտ նամա.
րանի-Մասն Ե. Համառոտ բառա.
կան Հայերէնէ յԱնգլիարէն-Մասն

Զ. Համառոտ բառարան Անգլիերէնէ
ի Հայերէն

Արամեան տպարանէն ի լոյս ըն.
ծայուած այս գործը՝ մաքուր տպագ.
րութեամբ եւ անգլիական կազմով

զեղեցիկ կերպիւ պատրաստուած՝ կը

ծախուի ամեն գրաված սոաց խա.
նութիւնը ի գին երկու Քրանք:

Մէրճանը իմամ Ալի խանի վե.
րի յարկը թիւ 20 սենեկի մէջ ամեն

օր Տաճկերէն և Ֆրանսերէն լեզ.
ուաց ինչպէս նաև Թուրքիստանեան

և Տօմարահայութեան դաստիարակ.
ութիւններ կ'լինին որոշեալ ժամերու

մէջ: Այն սենեակը նաև յանձն

կառնու պատրաստել տաճկերէն եւ

Ֆրանսերէն լեզուներով ամեն տե.
սակ պաշտօնական և ոչ-պաշտօնա.
կան գրութիւնք, զոր օրինակ խնդ.
րագիր, Բողբազիր, Տեղեկագիր,

Նամակ ևն: Արդոյ աղջկայիք մե.
նալ սենեակը զիմեով կրնան ա.
պահով լինիլ թէ՛ դաստուծեան և

թէ՛ մասնագոյն վերոյիշեալ գրու.
թեանց փրաքերութեամբ՝ փոյթ եւ

խնամ, ինչպէս նաև բանաւոր և
գոհացողիչ պայմաններ պիտի զըս.
ենն նոյն տեղ:

Թ-լիք Յ. Արթուրեան

ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Ոստան Հասարակեաց Ս. Լիւիզոյ

ԳՐԵՑ

Գարեգին Վ. Սրբազնորդեանց

Երկրորդ տիպ

Գին 60 բարա արծաթ:

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Բանախօսութիւն

Հ. ՄԱՂԱՔԻԱ Ա. ՕՐՄԱՆԵԱՆԵՐ

Արտասանեալ ի լսարանի

կրթասիրաց ընկ. Իսկիւտարու

Գինն է 3 ղշ. արծաթ զրամ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԻՏԵԼԻՔ ՈՒ ՊԱՐՏԻՔ ՏՂՈՑ

Բաղմարդիւն Մամուրեան էֆ ի

աշխատասիրութեամբ Եղմբի Տէտէ.

եան եղբարք տպարանէն ի լոյս ըն.
ծայեալ 248 երեսէ բաղկացած պատ.
ուակուն գիրք մնէ, որ կրնայ հեղի.

նակին սակէ առաջ հրատարակած

և Նոր ընթացքարանին լրացուցիչ մա.
սը համարուել և Մայկոսի Բ. Գառի

աշակերտաց ծառայելու Սոյն գործը

բաց ի ամենակարեւոր դիտելիքներէ

կ'սորունակէ նաև այնպիսի նիւթեր

որք ազգ. մանկուոյն սրտին մէջ ի

մատաղ հասակէ հայրենասիրական

գգացումներ կը ներշնչեն:

Կը ծախուի Ենիքի շումի 2/1ին.

կիրէր ճատտէսի, թիւ 2, Ս. Գու.
կասեան գրատունը, գին 1 1/2 Քր:

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԹՕՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կը ծախուի Ենիքի շումի 2/1ին.

կիրէր ճատտէսի թիւ 2, Ս. Գու.
կասեան գրատունը և ուրիշ գրքովաճա.
աց քով: Գին 1 Ֆրանք

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ՄԱՐՄԵՆ ԱՄԱՐ ԶՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

Հրատարակել

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Սոյն կարեւոր և օգտակար գըր.
քոյկը, որ թէ՛ ի պէտս վարժարանաց

և թէ՛ առանձինն ուսանողաց կրնայ

միանգամայն ծառայել, յստակ բա.
ցատրութեամբ, 150 փայտատիպ

պատկերք ճոխացեալ և 140 երեսէ

բաղկացեալ ընտիր գասագիրք մնէ,

գինն է կէս արծաթ մճիտ, (Գաղղ.
բնագրին գինն ըլլալով 3 ու կէս Քր.)

Կ'զատուի Կ. Պոլիս Սուլթան.

Համամ լսպատ էֆ. թիւ 27,

Նշան էֆ. Կ. Պէրպէրեանի փորագ.
րատունը և բոլոր գրաված սոաց քով:

Ինչպէս որ վարը յիշուած է:

Ամեն տեսակ Գոլի, Բատմոք.

սի, մէջքի կամ մղիքներու ցաւեր.

ու նաև Թանջը, Քօլէրա և այլ ա.

մասուն հիւանդութիւններ ունե.

ցողները այս գեղէն խմելու են հե.

տեւեալ կերպով: Այն գաւաթ շուրի

մէջ, զիւր ապուրի մը զրգալէն աւելի

չաքար, վրան լեցուր անուշի զրգալ

մը Փանասէ աղէկ մը խառնէ ու

խմէ:

Կրկրորդի հիւանդութեանց, և

Ուռեցքի համար զեղը վերոյիշեալ

կերպով պատրաստէ ու ժամը կամ

երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ

երկու անուշի զրգալ այն բաղադ.

րութեան խմէ: Յօղացաւի, Բիւմա.

թիւրի, Ուրբի ցաւի, Ստամբուլ ու

տեսակ տեսակ կանակի ցաւերու հա.

մար դուրսէն Փանասէ քսելով աղէկ

մը շիբուտ է: Այնպիսի ցաւի համար

քիչ մը բամպակի Փանասէի մէջ

թաթիկով ցաւած ակուպիւն վրայ

դնելու է:

Ամեն ատեն երրոր ցաւի մը հա.

մար դուրսէն Փանասէ քսել հարկ

կրկուց, եթէ քիչ մը ալ խմուի աւե.

լի շուտ բժշկութիւն կը ըլլայ:

Մարմնոյ սրուած կամ ճմրու.

ած տեղերը բժշկելու համար վստա.

զը պատահածին պէս Փանասէն

վրան աղէկ մը լեցնելու է: Գտնա.

լով ևն. կարուած վերքերը բժշկե.

լու համար՝ արիւնը շորքած ըստով

մը վերքը կապուելու և կապին վրայէն

Փանասէ լեցնելու է մինչև որ լաւ մը

թրջիլ Փանասէն նաև արեան շրջա.

նը կարագացնէ ու բոլոր բնութիւնը

կը զօրացնէ:

Այս գեղին օգտակարութեանը

վրայ երկարօ էն զրել աւելորդ կը

համարուի, գործածողները զայն

միշտ կը գոյնն, ուզողը կրնայ ան.

ճամբ փորձել. զինն աժան է: Կը

ծախուի Միւնստան և Բնկերաց Ա.
մերիկեան վաճառատունը որ ի Ղա.
սթիա Կ. Պոլսոյ

Table with 2 columns: Item, Price. Includes items like Ղալթիւ ՈՒՐ. 17 Օգոստ., ԸՆԻՆՆ, ՊԱՐՏ, ԱՐԺ, Բաց, Յամ գին, Բարձր գին, Գոց, Թղթաղ բուճ բոց, ցամ, բարձր, ժամը 11

Table with 2 columns: Item, Price. Includes items like Պոլի, 63ի, Չր. 006 30, 65ի, 069 00, 69ի, 066 30, 73ի, 062.10, Գանձատուն, Սուրէթէ Ժէնէրալ, Սուրէթէ Օթօման, Պանք սը Բօնաթ, Բրէտի Ժէնէրալ, Թրամիէյ, Բուճ. Երկաթուղի

Table with 2 columns: Item, Price. Includes items like ՐԵՐԹԱՅԵ ԳՐՈՒՄՈՑ, (Ուճ. սոյն 100 ու. 1 կարու.), Սնդը սակի, Գաղղ., Բօլ, Բրբմից, Հինդոց, Սէթալիք, Ճերմակ մէճիտ, Պլինն